Ալեքսանդր Ծատուրյան

Երազ

Ես երազ տեսա... Արյունով ներկված
Հայրենի երկիրն նորից կյանք առած,
Դարևոր ահեղ, համառ կռվից հետ,
Նա ողջունում էր գարուն լուսավետ:

Եվ հնչում էին այնտեղ ոգելից
Ազատ երգ ու տաղ ազատ սրտերից.
Այնտեղ շրջում էր դափնիներ ձեռին
Սուրբ ազատության չքնաղ դիցուհին:

Շրջում էր սար, ձոր, մտնում գյուղ, քաղաք,
Ամեն տեղ երգում գարնան հաղթանակ.
Եվ լսում էի ես նորա թովիչ,
Քաղցրալուր ձայնը «Լսի՛ր, ո՛վ երգիչ.

Աշխարհ եմ եկել, բայց ոչ երկնքից.
Ծնվել եմ ազգիդ արնաներկ կրծքից.
Ուր ապրում էի ես այնքա՜ն դարեր
Եվ տեսնում ազգիդ սրտամաշ ցավեր...

Ես տանջվում էի, անզոր արտասվում.
Հայրենի երկրիդ նոր կյանք երազում.
Եվ փա՜ռք քո ազգի մարտիրոսներին,

Նոցա շիրիմներն ինձ աշխարհ բերին:

Անցեք են օրերն անսանձ բռնության
Փշրվել է արդեն և՛ սպանիչ շղթան:
Էլ մի՛ լար, երգի՛չ... Թող այսուհետև
Քո մուսան երգի նոր կյանք ու արև ...»:

Ասաց դիցուհին և ձեռքին բռնած
Վերջին պրսակը դեպի ինձ պարզեց.
Նայեց քընարիս, խոնարհվեց կամաց.
Եվ մի ջերմ համբույր ճակատս այրեց...

Զարթեցա իսկո՛ւյն... Ավա՜ղ, երազիս...
Խորին տրտմություն համակեց հոգիս...
Նայեցի շուրջս լաց, սուգ ու խավար
Դարձյա՜լ պատել էր հայրենի աշխարհ...